

Ալա Ա. Խառատյան  
*Բանաս. գիտ. թեկնածու*

**«...Այսօր, մեր ազգին բոլոր հատուածներուն ու բոլոր հաստատութեանց հետ, Մեսրոպներուն, Խորենացիներուն, Եղիշէներուն ձեռքով հիմնած, Մխիթարներուն, Աբովեաններուն, Ալիշաններուն շունչով վերակենդանացած ու ձոխացած Հայ Գրական Տունը ևս սգաւոր է...»<sup>89</sup>:  
Արշակ Զօպանեան**

## **ՄԻՄՈՆ ԶԱՎԱՐՅԱՆԻ ԿԵՐՊԱՐՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ\***

Հայ գրականության ձևավորման ակունքներում կերպարակերտման սկզբունքը ունեցել է երկու կարևոր բևեռ՝ հոգևոր և աշխարհիկ, որոնք հիմնականում պահպանվել են հայ մատենագրության միջնադարյան շրջանում:

Սակայն հասարակական գիտակցության բարձրագույն նվաճումը Մովսես Խորենացու որդեգրած սկզբունքն էր, ով կարողացավ երկուսի մեջ մասնավորեցնել դրանց կոնկրետ դրսևորումները՝ կերտելով հայ քաղաքական մտքի ներկայացուցիչների կերպարներ: Ազգային գիտակցության առումով այս բարձր նվաճումը հետագայում դառնում է հայ գրականության մշտական ուղեկիցը՝ երբեմն իր գաղափարական ծանրաբեռնվածությամբ ճնշելով գեղագիտական արժանիքները, բայց երբեմն էլ (Եղիշե Չարենցի բանարվեստի օրինակով) դա իրականացվելով այնքան վարպետորեն, որ և՛ խորենացիական արքիտեքստն էր պահպանվում, և՛ զանց չէին առնվում արվեստի չափանիշները:

Պատմության այս կամ այն շրջափուլում հայ գրականության մեջ՝ հասարակական խնդիրների դրդմամբ, առաջ էր մղվում որևէ քաղաքական կերպար, որի գործունեությունը վճռորոշ էր լինում պատմամշակութային կյանքում ու հարաբերություններում: Դա վիպային տարածքում ընդգծված դրսևորում էր ստանում 19-րդ դարի հայ արձակույթ, երբ ժողովրդական ու ազգային գիտակցության նոր մակարդակը առաջ էր քաշում պետության գաղափարը, այդ պետությունը ստեղծող ու պահող անհատների անհրաժեշտությունը և նրանց կարևոր առանձնահատկության՝ ժողովր-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 18.11.2013:

89 Արշակ Զօպանեան, Հոյական տերվիշը, «Միմոն Զուարեան», Ա հատոր, Պէյրուֆ, Համազգայինի Վահէ Մէթեան տպարան, 1983, էջ 213:

դայնության ընդգծումը (Խաչատուր Աբովյան):

Սակայն 19-րդ դարակեսից հետո և հաջորդ դարակզբի հայ քաղաքական կյանքը բնորոշվում էր նաև մեծ կորուստների ու ձեռքբերումների համաձուլվածքով. մի կողմից ազգային միտքն ու գիտակցությունը պետության ստեղծման գաղափարն էին առաջ տանում, մյուս կողմից՝ այդ պետությունը ստեղծվում ու կանգնում էր կորստի վտանգի առաջ: Բնական էր, որ այս ամենը կողավորված կամ ոչ, պիտի իր արձագանքը ստանար արվեստում և հատկապես դրա գրավոր արտացոլման մեջ: Այս առումով ևս գրականության մեջ արձագանքներն ուղղակի չէին լինում. կամ նման կերպար կար և այդ պահին նա անհրաժեշտ էր, կամ գրականությամբ էր ստեղծվում այն:

Նման քաղաքական կերպարի որոնումները 20-րդ դարակզբի պեղծիայում առավել հատուկ էին գրականության **արևմտահայ** ճյուղին և առավել չափով դրսևորվում էին նրա գաղափարականացված ու քաղաքական որոշակի այլագրում ունեցող դեմքերի՝ **Դանիել Վարուժանի** և **Սիամանյոյի** մոտ: Այս երկուսի համապատասխան գործերում դրվում էր ազգային գիտակցություն ունեցող կերպարի կամ առավել հստակ՝ հայի **առաջնորդ տեսակի** անհրաժեշտությունը: Սակայն ճշմարտությունը պահանջում է ասել, որ ամեն դեպքում նրանք իրենց գործերում, բացի այս կամ այն ստեղծագործությունը կոնկրետ որևէ մեկին հղելու դեպքերից (օրինակ՝ Ավետիս Ահարոնյանին նվիրված՝ Դանիել Վարուժանի «Հովիվը» պոեմը) ու ընծայական մակագրություններից, որևէ մեկին նկատի չունեին:

Համենայն դեպս տպավորությունն այդպես կմնա, մինչև նորից չունենանք, օրինակ՝ Սիամանյոյի երկերի ամբողջական հրատարակությունը, որտեղ, հուսանք, տեղ կգտնի 1914-ին գրված «Զավարեանի հոգիին» բանաստեղծությունը: Ինչ վերաբերում է Դանիել Վարուժանին, ապա թեև Վարուժանը Զավարյանին նվիրված կոնկրետ բանաստեղծություն չունի, բայց նա ևս գտել է իր որոնած այն կերպարը, որին համընկնում է Սիմոն Զավարյանը, բայց տվյալ դեպքում՝ մահախոսականի միջոցով: Նշենք, որ տվյալ ստեղծագործությունն իրականում մեծ աղերսներ ունի Վարուժանի պեղծիայում կերտված այն քաղաքական կերպարի հետ, որը նրա համար 20-րդ դարի հայ մարդուն անհրաժեշտ տեսակն է, և այդ պատճառով դիտելի ու քննելի է մահախոսականի դիմանկարի համատեքստում:

Նշենք, որ Սիմոն Զավարյանի մասին գրվել է միայն նրա մահից հետո, ընդ որում հիմնականում մահախոսականների միջոցով: Սակայն կարևորն այն է, որ նրա դիմանկարը Վարուժանի մահախոսականում հատկանշվում է որպես գրականության մեջ արտահայտված տիպար-քաղաքական կերպար: Այս առումով կանդորադառնանք նաև այն գրողների մահախոսականներին, ովքեր ստեղծել են Սիմոն Զավարյանի նման կերպարը՝ **Երվանդ Օտյան, Զոհրապ, Արշակ Չոպանյան, և իհարկե՝ Սիամանյոն** ու **Վարուժան**: Ըստ էության, Սիմոն Զավարյանին տիպականացնելով՝ նրանք նկատի ունեին ժամանակի հայ քաղաքական գործչին անհրաժեշտ որակները: Գրեթե բոլոր հեղինակների խոսքում շեշտվում էր Զավարյանի **մարդկային տիպի** հետևյալ բնորոշումը. «Ու հիմա որ այդ ձայնը կը լռէ ի սպառ,

ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

Ե (ԺԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

ամբողջ Հայութիւնն է որ կ'արտասուէ, որովհետև Զաւարեան Դաշնակցականէ աւելի՝ Հայ մըն էր և Հայէ մը ավելի՝ Մարդ մը, մին այն Տիպար-Մարդերէն, որ բնութիւնը երբեմն կը ստեղծէ, իբրև օրինակ ծառայելու համար մեզի և որոնցմէ, ափսո՛ւ, չենք կրնար օգտուիլ յաճախ»<sup>90</sup>:

Քաղաքական առաջնորդին բնորոշ տիպականի տեսանկյունից Միմոն Զավարյանի կերպարում Զոհրապը շեշտադրում էր հեղափոխականության գաղափարը. «Մին էր անոնցմէ, այն կամաւորներու պզտիկ խումբէն, որոնք օրին մէկը անհնարին երազ մը իրականացնելու համար առաջ նետուեցան:

Ահա մեր Արուեստը՝ առաջ նետուիլ, ամէն բանի մէջ և ամէն տեղ: Ահա մեծ Պատիւը՝ ամէն վայրկեան վտանգին դէմ, բանտին դէմ, կախաղանին դէմ քալել և քալել աներկիւղ. և ահա մեծ Արիութիւնը՝ պարտասումին և վիատութեան դէմ, և ափսոս... երբեմն նոյնիսկ քու ազգիդ կողմէ եկող հարուածներուն և ատելութիւններուն դէմ քալել և քալել անվհատ:

Եւ այս եղաւ քսան տարի շարունակ կեանքը այս երիտասարդներուն, այսօր ծերեր արդէն. այս եղաւ սխրալի դիւցազներգութիւնը և անհաւատալի վէպը՝ որ Հայկական Յեղափոխութիւն կը կոչուի:

Միմոն Զաւարեան մին էր անոնցմէ, անիկա աստուածներու գերագոյնը՝ Ճշմարտութիւնը պաշտեց մինչև վերջը. կրօնքներէն ազնուագոյնին կապուած մնաց՝ Խղճմտանքին. սէրերուն ամէնէն դժբախտը ունեցաւ՝ Ազգի սէրը»<sup>91</sup>:

Այս բոլոր բնորոշումների մեջ ընդգծվում էր ազգային նկարագիր ունեցող մարդու կերպարը, որի գերխնդիրը եղել է ժողովրդի պահպանությունն ու նրա գիտակցական մակարդակի բարձրացումը, և որին հասնելու համար Զավարյանը, բացի քաղաքականից, աշխատում էր նաև երկրի տնտեսական վիճակի ուսումնասիրության, գաղթականության պատճառների ու երկրի հետագա գոյության վրա դրա հնարավոր ազդեցությունների բացահայտման միջոցով, որոնք այսօր առավել քան արդիական են հնչում: Այս և բազում այլ պատճառներ առիթ են դարձել, որ ժամանակին Միմոն Զավարյանի խոսքերը համարվեն մարգարեություններ, իսկ ինքը՝ մարգարե:

Զավարյանն իր գաղափարների իրագործմանը հասնելու համար գործում էր անձնագոհաբար, մոռանալով սեփական անձը՝ պայքարում էր հայրենիքի ստեղծման ու փրկության համար: Եվ տարբեր հարթություններում կանգնած հայ մտավորականության ներկայացուցիչները, անկախ նրան անձնապես ձանաչելու հանգամանքից, Զավարյանի գործունեության մեջ կարևորում էին այն, ինչ կոչվում է անհատականություն, կամք, հերոսություն ու մեծ ցանկություն՝ կատարելու իր առջև դրված պետականատեղծ նպատակները: Այդ մասին Փարիզում Միմոն Զավարյանի մահվան կապակցությամբ արտասանած իր ելույթում նշում էր Արշակ Չոպանյանը: Ազգանվեր անհատականությունների կարիքը հայոց պատմությունը միշտ

90 Երուանդ Օտեան, Տիպար մարդը, «Միմոն Զաւարեան», Ա հատոր, էջ 235:

91 Գ. Զոհրապ, Բօթ, նույն տեղում, էջ 233:

ունեցել է, իսկ նրանց պակասը անխուսափելի կորուստների է հանգեցրել, ուստի նման անհատին տեսնելն ու նկատելը դառնում էր ազգային մտավորականության կողմից նրա անհատական գործունեության պատմական արժեքում հիմնաքարը. «Բայց ինչ որ ինծի ծանոթ էր՝ կը բաւէր, որպէսզի յարգեի զինքը իբր մեր ցեղին ամենէն թանկագին ներկայացուցիչներէն մին: Գիտէի, ինչպիսի մեծ տեղ մը կը բռնէր ան մեր ազգային կեանքին մէջ՝ իբր ազգասէր գործիչ, իբր հայոց ամենէն հզօր յեղափոխական կազմակերպութեան հիմնադիրներէն և ղեկավարներէն մին, իբր ուսուցիչ, իբր հայ գիւղացոյն կացութեան բարելամանը հոգածու, անձնուէր ու հմուտ մասնագէտ. և ան ինծի ծանօթ էր մասնաւանդ իբր այն անզուգական Հայը, որու մասին՝ զինքը ճանչցող ամէն հայէ, ինչ կուսակցութեան ալ պատկանէր, հիացման ու գորովի խօսքեր միայն լսած էի»<sup>92</sup>:

Առաջ տանելով Զավարյանի գործունեության իր գնահատումը՝ Չոպանյանն այն համարում է **առաքելություն**, որն այսօրվա ընկալման մեջ որքան էլ պաթետիկ հնչի, հիրավի, արտացոլում է այն ողբերգական իրավիճակը, որում գտնվում էր հայ ժողովուրդը՝ զգալով նման անհատականությունների անհրաժեշտությունը. ««Առաքեալ» բառը յաճախ յեղյեղուեցաւ իրեն նկատմամբ՝ իր մահուան առթիւ արտասանուած ճառերուն կամ հրատարակուած յօդուածներուն մէջ. արդ, նկատի ունենալով ամէն եսականութենէ հրաժարած, ինքզինքն ամբողջովին հանրութեան նուիրած այդ քարոզող, ոգևորող, սփոփող, իղէալ սերմանող, մաքուր ու արի հոգիներ դարբնող թափառական ու ներշնչեալ տէրվիշի հոյակապ կեանքը, ես ոչ միայն իրաւացի կը գտնեմ այդ մեծ պատուանունին յատկացուիլը Զաւարեանին, այլ՝ իմ այն օրը իրեն հետ ունեցած տեսակցութենէս կրած տպաւորութեան համեմատ՝ կը մղուիմ ճշդել, և ըսել, թէ ան կ'ոգէր Աւետարանի առաքեալներուն մէջէն ամէնէն քաղցրը և ներհունը, ամէնէն երազունն ու դաշնաբարբառը, վսեմ Նազովրեցոյն ամենէն սիրելի աշակերտը. ան ինծի կը թուի եղած ըլլալ Հայ Յեղափոխութեան սուրբ Յովհաննէսը: Հաճելի է ինծի համար իմ այդ հին տպաւորութիւնս արթնցնել այս իրիկուն և բերել զայն իբր իմ ալ յարգանքիս մէկ նշանը դնել մեր ողբացեալ վեհօգի հայրենակցին դամբարանին վրայ»<sup>93</sup>:

Զավարյանի ցեղային ճանաչողությանն ուղղված չոպանյանական գնահատականներում հիմնարար է նրան հայ ժողովրդի հետ նույնականացնելը, ուստիև՝ Զավարյանի մահը ազգային ողբերգություն ընկալելը, որով վտանգվում էր հայ ժողովրդի գիտակցական պատմական երթը. «Այն մեծադողորդ յուզմունքին մէջ, որով բովանդակ հայ ժողովուրդը, Զաւարեանի մահուամբ ինքզինքը հարուածուած զգալով՝ որպէս թէ ինքն իսկ սրտէն զարնուած ըլլար, անոր դազադին առջև ծունկի եկաւ ու հեկեկաց՝ ինչպէս խցուած դառնասուղ մայրիկ մը իր անձնուէր, խնամատար մէկ զաւկին շիրմին հանդէպ, այդ մեծաշուք յուզմունքին մէջ, ես չեմ գիտեր որո՞ն վրայ աւելի սքանչանալ, այդ

92 Արշակ Չոպանեան, Հոյական տերվիշը, նույն տեղում, էջ 211:  
93 Նույն տեղում էջ 212:

ժողովրդին, որ այդ աստիճան խորությամբ, միահաղունությամբ ու վեհությամբ գիտցաւ իր մէկ մեծ գործիչին մահը ողբալ և յիշատակը դափնեպսակել, թէ անհետացող Հայրդիին, որ իր հոգւոյն անխառն մաքրութեամբ, իր կեանքին գնայելի գեղեցկութեամբ կրցաւ այսպիսի յուզումնք մը ներշնչել իր մահովն աղէտաւորուած ժողովրդին: Բայց ես կը կարծեմ, թէ այդ զանազանութիւնը, այդ ընդդիմաբերումը անեղորդ իսկ են արդէն և անձիշդ: Զաւարեան մը և հայ ժողովուրդը անհնար է անջատել իրարմէ և մին միւսին հետ համեմատութեան դնել. Զաւարեան ուրիշ ոչինչ էր եթէ ոչ նոյն ինքն հայ ժողովուրդը իր բարոյական լաւագոյն տարրերուն մէջ խտացած, համադրուած, խորհրդանկարուած»<sup>94</sup>:

Այսպիսով՝ Չոպանյանը Զավարյանի մեջ տեսնում է այն բոլոր ազգային հատկանիշները, որոնք խտացնում են էպոսի հերոսները՝ անկեղծություն, ժողովրդասիրություն, ազատասիրություն, աշխատասիրություն, գաղափարի համար անձնագոհություն, հատկանիշներ, որոնց շնորհիվ կարողացել է գոյատևել հայ ժողովուրդը ու դուրս գալ այս կամ այն արհավիրքից. «Կան տիպարներ, զորս գրականութիւնը կը ստեղծէ, և ժողովուրդները՝ հմայուած՝ այդ մտացածին տիպարները կ'իրականացնեն. այդպէս՝ Բաֆֆիի հերոսները. բայց կան ալ մարդիկ, որ իրենք իսկ՝ իրենց հոգիին բնիկ զօրութեամբ, իրենց կեանքին ինքնաբոլիս գեղեցկութեամբ, տիպարի մը բարձրութեանը կը հասնին ու ներշնչարան կը դառնան գրագէտին»<sup>95</sup>:

Իսկ Դանիել Վարուժանի գրած մահախոսականի տեքստի մեջ հետաքրքիր է հենց Միմոն Զավարյանին տրված բնորոշումը, որն իր մեջ միաձուլում է այն հատկանիշները, որոնք Վարուժանը անհրաժեշտ էր համարում ազգային ղեկավարի համար. «Պսանը մեռան.՝ ողբացէք Պսանը»: Վարուժանն իր «Տեղին սրտում» և հետագա երկու ժողովածուներում բերում էր մի մարդու տեսակ, որն, ըստ նրա, 20-րդ դարի մարդու տեսակը պիտի լիներ՝ ամբողջական հատկանիշներով: «Տեղին սիրտը» ժողովածուում Վարուժանը որոնում էր ազգային տեսակի միֆը: Նրա կարծիքով՝ այն կորսված է մնացել դարերի խորքում՝ պատճառ դառնալով բազմաթիվ կորուստների՝ քրիստոնեւոյան մուտքից մինչև Բազրատունյաց անկումն ու 20-րդ դարի արհավիրքները: Եվ այդ կորսված ոգու վերածնումը Վարուժանը հայմարդու մեջ քաղաքական փոփոխությունների միակ հնարավոր տարրերակն է համարում.

**Եկու՛ր, եկու՛ր. Եվ Մասիսի կատարեն  
Դյուցազներու, վրկաներու հոգիներ,  
Իբր աստղերու սերմընցան,  
Տեղա՛ բոլոր իզոյթյան մեջ մեր երկրին,  
Մեր սրբուերուն խորունկ խորքերը հոսե  
Արյունդ անբիծ, զոր շիթ առ շիթ ժողվեցիր  
Վարդաններու ռազմահարդար հետքերեն,  
Եվ ըրե մեր օրրաններն**

94 Նույն տեղում էջ 212:

95 Նույն տեղում, էջ 213:

**Արշակներու վերածննդ շիրիմներ.  
Ամեն հայու լանջքին տակ  
Իր մեկ հին պապն արթընցուր<sup>96</sup>...**

ԳՆԱՀԱՏՈՒՄԵՐ

Ե (ԺԵ) քարի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

Վարուժանի որոնած հատկանիշներից մեկը ցեղագիտակցություն ունեցող մարդն էր, որը հեղափոխական է, պայքարում է նորը բերելու համար, և այդ նորն իրականում իր օրերի դեգրադացված հայի նախկին տեսակն է: Նա հայրենիք է արարում ու պահում, նա ընտանիք է ստեղծում ու պահում և, որ ամենակարևորն է, նա այն տեսակն է, որ իր տանն է, միշտ ներկա է որպես հայր:

Վարուժանի համար ազգային կորուստների մեծագույն պատճառներից մեկը ընտանիքն առանց հայր ու տղամարդ թողած հայն է, ում զավակն ու կինը առանց նրա են, որն էլ հանգեցնում է բազմաթիվ կորուստների՝ ընդհուպ հայրենիքի ամբողջական կորուստը: Մրանով էր Վարուժանը պայմանավորում նաև 19-րդ դարավերջի ու 20-րդ դարակզբի ողբերգական դեպքերը: Նրա առաջադրած հայ տղամարդու բնորոշ ընտանիքում է, պայքարում է իր պապերի նման, զավակ ունի ու մշակ է: Այս առումով շատ կարևոր է հենց **Պանի** ու **Զավարյանի** կերպարի նույնականացված ընկալումը: Բոլորին է հայտնի, որ Պանի պաշտամունքը կապված էր արարման գործառույթների հետ, և նրա անվան ստուգաբանությունն էլ դրա հիմնավորումն է՝ «բեղմնավոր դարձնել»: Այստեղից էլ սկսում է Վարուժանը՝ Միմոն Զավարյանին բնորոշելով որպես հայրենիք կառուցող մարդու, ինչը դրսևորվում էր զանազան տարբերակներով՝ հողագործությունից ու մշակության արվեստից, ընտանիքի ցանկալի հոր տեսակից ու ամուսին լինելուց մինչև հեղափոխական-քաղաքական գործունեության ձևը. «**Դուն Պանն եղար մեր հայրենիքին. արինազանգ հողին հսկայական տրոփինին մէջ տրոփեց քու սիրտդ. դուն, անոր ակօսները խտէալիդ կայծերովը սերմանեցիր: Դուն հայ մշակներուն Մշակը, անոնց սորվեցուցիր հրաշքները խոփին, գաղտնիքը սերմնացանին, և անոնց քրտինքով քրտնեցար, և միշտ ու միշտ տառապեցար ու գործեցիր անոնց գերմարդկային ջանքերուն արդիւնքին կողոպուտը տեսնելով: Ու նաև ճակատդ խոնարհեցիր դեռ միւս խոնարհներուն վրայ, հայրենիքին յոյսի ու հացի քաղցով զավարուող մանուկներու սիրտին վրայ, տալով ինչ որ ունէիր, տալով մանաւանդ Իտէալիդ բոցը՝ որ խրճիթէ խրճիթ, թոնիրէ թոնիր կանգնեց բոլորը, բորբոքեց գերմարդկային յոյսերուն և կարելի յաղթանակին հրդեհովը**»<sup>97</sup>:

Եթե Վարուժանի այս բնութագրումները զուգահեռենք դեռևս 1906 թվականին գրված «Լվացարարուիին» բանաստեղծության ներքին տեքստին, ապա ակնհայտ կդառնա այս մահախոսականի կապը նրա բանաստեղծական ենթատեքստերին: Վարուժանի բանաստեղծության մեջ պատկերված տունը անտղամարդ է, կինը՝ առանց ամուսնու, և խրճիթը, որ ամբողջ Հայաստանն է խորհրդանշում, ավերակ է: Ողջ ժողովածուի միջով անցնում է այն ենթատեքստը, որ Հայաստանի հզոր վերածնումը կապված

96 Տե՛ս **Դանիել Վարուժան**, ԵԼԺ, հատ.1, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1986, էջ 84:  
97 **Պ. Դանիել Վարուժան** (բանախոսություն), «**Միմոն Զաւարեան**», Ա հատոր, էջ 261:

է հայր-մայր-զավակ ամուր կապի հետ, նրանց միասնությունը բերում է շենության ու հզորության, իսկ դրա բացակայությունը, որի խորհրդանիշը «Ավերակներու տիկինը» բանաստեղծությունն է, հանգեցնում է տան կնոջ, այսինքն՝ հայրենիքի օտարին տրվելուն, հետևաբար՝ ավերվելուն.

**Թողուց որ գլուխը շոյե  
Լրրջադեմ Թուրքն և կամ Չերքեզն հաստահոն.  
Եվ Հրրեային և Հույնին  
Ճակատներուն վրա թոթվեց  
Սև անտառներն իր խընկաբույր մազերուն.**

.....  
-Կեցցե՛ն ըսին այն ժամանակ հոն բազմած  
Մարդերն ամեն ցեղերու,  
Կեցցե՛ն Այրին գեղագանգուր՝ որ ահա  
Մեկ օրվան մեջ կը ձրգե քողը սուգի  
Եվ լաչակն իր մոխրահոտ.  
Թող Վոսփորն իր վիհերեն  
Անուսնական բերե մատնի մ'ադամանդ,  
Այս իրիկվան մեջ զուգելու համար զայն  
Մեծ Ազգին հետ օսմանյան:  
Կեցցե՛ն Մայրն այն սևազգեստ՝  
Որ գիշերվան մեջ հերոսներ կը թաղե,  
Առավոտուն կ'ըլլա հարս,  
Հա՛րս կ'ըլլա, հա՛րսը բոլորիս, հա՛րսն արբշիռ,  
Որ ծովուն քով և խրախճանքի սեղանին  
Վարդ կը նետե ամենուն,  
Եվ ավասիկ կ'համբուրե  
Իր գինիոտ բերանով  
Մարդերն ամեն ցեղերու<sup>98</sup>...

Այս ամենից հետո Միմոն Զավարյանին տրված գնահատականները վկայում են, որ Վարուժանի մահախոսականն իրականում ոչ միայն այդ պահին ասված խոսք էր, այլև նրա որոնած ու գտած քաղաքական կերպարին տրված աչառու գնահատական, որը վերածնում էր հայրենիքը, կառուցում էր երկիրը՝ որպես լիարժեք պետական մարդ:

Սոցիալ-քաղաքական կյանքը յուրաքանչյուր ժամանակահատվածում թելադրում է իրեն հարմար քաղաքական կերպարների ու միջերի ծնունդը: Միամանթոյի ամբողջ ստեղծագործության միջով ևս, ինչպես Վարուժանի դեպքում է, անցնում էր նման կերպարների անհրաժեշտությունն ու դրանց որոնումը: Սկսած «Դյուցազնորեն» ժողովածուից մինչև իր վերջին ժողովածուն ու մինչև «Սուրբ Մեսրոպ» պոեմը, Միամանթոն մերթ քաղաքական կերպարներ էր որոնում, մերթ նրանց ծնունդ տալու համար համապատասխան հոգևոր ու մշակութային հիմքեր փնտրում: Այս առումով Միամանթոն ու Վարուժանը որոնում էին քաղաքական նույն միջը, և

98 Դանիել Վարուժան, ԵԼԺ, հատ.1, էջ 201-202:

բնավ պատահական չէ, որ երկուսն էլ անդրադարձել են Միմոն Զավարյանի մահվանը. մեկը՝ էականորեն տարբեր մահախոսականով, մյուսը՝ մահվանից հետո գրված երկարաշունչ բանաստեղծությամբ: Միամանթոյի բանաստեղծության մեջ Զավարյանի կերպարը երևում է բարոյական ու քաղաքական հարցադրումներով և կողմերով՝ շեշտադրելով նրա առաքինությունները.

**Եւ ես կ'ողջունեմ քեզ, խորհրդանիշ պայծառութեան,  
Դուն մարդերու խղճին նժար,  
Դուն մարդերու մտրակիչ և մարդերէն մարտիրոս,  
Եւ դուն անոնց անգին նոխազ, և դուն անոնց անգին գերի...**

.....  
**Եւ ես կ'ողջունեմ քեզ, ո՛վ փրկարար փոթորիկ,  
Դուն՝ գարշութեանց մաքրիչ և փոքրոգութեանց խարազան,  
Դուն քու խաչդ ուսիդ՝ Գողգոթայէն վեր մագլցող  
Ո՛վ սրբակրօն Միմէօն, ո՛վ եղերական մարդ-Ցիսու...<sup>99</sup>:**

Միամանթոյի գտած-արժևորած մեծագույն կերպարը Մեսրոպ Մաշտոցն էր՝ որպէս հոգևոր մշակույթի մեծ ստեղծիչ, հայ տեսակի պահպանման մարմնավորում, որպէս հայոց կյանքում ամենահեղափոխական ներդրումն ունեցած անհատականություն: Այս առումով որոշ զուգահեռներ կարելի է տանել Միամանթոյի կերտած Մաշտոցի ու Միմոն Զավարյանի կերպարների միջև: Եթե Մեսրոպ Մաշտոցը մշակութաբանական առումով դարձել է ֆենոմենալ երևույթ՝ նաև քաղաքականության ասպարեզում, ապա Միմոն Զավարյանի գործունեության որոշ կողմեր ևս Միամանթոյի համար քաղաքական ու մշակութաբանական արժեք ունեն՝ իհարկե, դրանց ազդեցության մակարդակի գիտակցումով:

Քաղաքական միֆերը, որպէս կանոն, ձևավորվում են սոցիալական միֆաստեղծման ճանապարհով: Միմոն Զավարյանի կերպարը, լինելով քաղաքական կերպար, Միամանթոյի մոտ գնահատվում է իր անցած ճանապարհով, այսինքն՝ ոչ թե որպէս պատրաստի կերպար, այլ դրան հասնելու՝ ձևավորման ընթացքում հարազատ ժողովրդի կյանքում ունեցած անգամ կենցաղային ներդրումով:

**Ամփոփելով**, կարող ենք եզրակացնել, որ արևմտահայ բոլոր այն գրողները, որոնք անդրադարձել են Միմոն Զավարյանի քաղաքական կերպարին, այդ դժվարին ժամանակներում կարևորել են նրա ազդեցիկ դերակատարությունը հասարակական կյանքում, ազգային ինքնագիտակցության բարձրացման, պետականության հիմքերի ստեղծման գործում ունեցած մեծ ներդրումը՝ բազմիցս շեշտադրելով Զավարյանի՝ դրան համարժեք բարոյական ու մարդկային նկարագիրը:

99 Միամանթօ, Զաւարեանի հոգիին, «Միմոն Զաւարեան», Ա.հատ., էջ 123-124:

ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

Ե (ԺԵ) քարի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես



## Summary

### **SIMON ZAVARYAN'S IMAGE IN WESTERN-ARMENIAN LITERATURE**

Ala A. Kharatyan

The article is devoted to the image appreciation of well-known figure in western-Armenian literature AR Federations member Simon Zavaryan. The article is mainly about the literary interpretations of the western-Armenian writers who have managed to express their distress concerning the events taking place in the political life of that period, and it refers also the ideological questions, which could be realized in political life with the help of such persons. In this sense some parallels are drawn between the characters of Zavaryan's literary works and him, as political figure.